

3.5.3. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությամբ առանձնացված իրավաբանական անձանց միությունների խմբի (արհեստակցական միությունները ներառված չեն և ներկայացված են առանձին) 2001թ. դրամական միջոցների մուտքերը կազմել են 438.0 մլն. դրամ, հաշվեգրված ելքերը՝ 414.0 մլն. դրամ, իսկ փաստացի ելքերը՝ 404.4 մլն. դրամ:

Իրավաբանական անձանց միությունների 2001թ. դրամական միջոցների մուտքերում գերակշռում են անդամավճարները, նվիրատվությունները և այլ անհատույց մուտքերը, որոնք կազմել են 248.1 մլն. դրամ, ինչը կազմում է ընդամենը մուտքերի 56.7%-ը: Նշված մուտքերից 53.5%-ը ստացվել է կազմակերպություններից, իսկ 41.4%-ը՝ արտասահմանից, որոնք իրավաբանական անձանց միությունների ընդամենը մուտքերում կազմում են համապատասխանաբար 30.3% և 23.5%: Հետաքրքիր է, որ հիմնական միջոցների վաճառքից և վերագնահատումից ստացված եկամուտները կազմել են ընդամենը մուտքերի 33.8%-ը:

Իրավաբանական անձանց միությունների խմբի դրամական միջոցների ելքերում հաշվեգրված ընթացիկ ծախսերը կազմում են 297.1 մլն. դրամ կամ ընդամենը հաշվեգրված ելքերի 71.8%-ը (փաստացի ընթացիկ ծախսերը կազմել են 287.5 մլն դրամ կամ ընդամենը փաստացի ելքերի 71.1%-ը): Հաշվեգրված ընթացիկ ծախսերում 53.3%-ը կազմել են այլ ընթացիկ ծախսերը (փաստացի ելքերում համապատասխանաբար՝ 55.1%), իսկ 25.4%-ը աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները (փաստացի վճարները համապատասխանաբար՝ 24.6%), որոնց տեսակարար կշիռներն ընդամենը ելքերում կազմել են համապատասխանաբար՝ 38.3% և 18.2% (փաստացի ելքերում 39.2% և 17.5%): Իրավաբանական անձանց միությունների խմբի դրամական միջոցների ամփոփ ելքերում մեծ կշիռ ունեն պարտքի հիմնական գումարի և վարկերի ու փոխառությունների տոկոսների մարման ծախսերը, որոնք կազմել են 60 մլն. դրամ (ընդամենը հաշվեգրված ելքերի 14.5%-ը և փաստացի ելքերի 14.8%-ը), ինչպես նաև կապիտալ նորոգմանն ուղղված ծախսերը՝ 54 մլն. դրամ (ընդամենը հաշվեգրված ելքերի 13.0%-ը և փաստացի ելքերի 13.4%-ը):

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությամբ առանձնացված իրավաբանական անձանց միությունների խմբի 2001թ. դրամական միջոցների մուտքերը, դրանց փաստացի և հաշվեգրված ելքերն, ըստ առանձին ուղղությունների, բերված են աղյուսակներ 9 և 10-ում:

Իրավաբանական անձանց միությունների 2001թ. դրամական մուտքերն, ըստ առանձին ուղղությունների՝ գնահատված հետազոտության արդյունքներով

Ցուցանիշի անվանումը	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ
Անդամավճարներ, հովանավորչական նվիրատվություններ, հունանիտար օգնություն և այլ անհատույց մուտքեր	248 141	56.65%
Այդ թվում՝ բնակչությունից	12 600	2.88%
արտասահմանից	102 749	23.46%
կազմակերպություններից	132 792	30.32%
Մուտքեր պետական բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից	0	0.00%
Մուտքեր ապրանքների, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների վաճառքից	0	0.00%
Հիմնական միջոցների վարձակալության դիմաց ստացած եկամուտներ (առանց ԱԱՀ)	9 500	2.17%
Հիմնական միջոցների վաճառքից և վերագնահատումից ստացված եկամուտներ	147 861	33.76%
Շահաբաժիններ, տոկոսներ և ֆինանսական գործունեությունից եկամուտներ	2 500	0.57%
Այլ գործառնական և ոչ գործառնական եկամուտներ	0	0.00%
Վարկեր, փոխառություններ	0	0.00%
Այլ մուտքեր	30 000	6.85%
Ընդամենը մուտքեր	438 002	100.00%

Իրավաբանական անձանց միությունների 2001թ. դրամական ելքերն (փաստացի և հաշվեգրված), ըստ առանձին ուղղությունների՝ գնահատված հետազոտության արդյունքներով

Ցուցանիշի անվանումը	փաստացի		հաշվեգրված	
	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ
Ընթացիկ ծախսեր, ընդամենը	287 546	71.10%	297 080	71.76%
Այդ թվում՝ Նյութական ծախսեր	15 499	3.83%	15 499	3.74%
Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ	70 731	17.49%	75 524	18.24%
Սոցիալական ապահովագրության և ապահովության վճարներ	16 100	3.98%	16 583	4.01%
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ	-	-	4 123	1.00%
Վարձակալության դիմաց կատարված վճարումներ	1 489	0.37%	1 624	0.39%
Վճարումներ այլ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց	25 278	6.25%	25 278	6.11%
Այլ ընթացիկ ծախսեր	158 450	39.18%	158 450	38.27%
Ներդրումներ, ուղղված հիմնական միջոցների և ոչ նյութական	0	0.00%	0	0.00%

<i>Ցուցանիշի անվանումը</i>	փաստացի		հաշվեգրված	
	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>
ակտիվների ձեռք բերմանը				
Կապիտալ նորոգմանն ուղղված ծախսեր	54 000	13.35%	54 000	13.04%
Նպաստներ և նյութական օգնություն բնեղեն արտահայտությամբ	0	0.00%	0	0.00%
Նպաստներ և նյութական օգնություն դրամական արտահայտությամբ	2 640	0.65%	2 640	0.64%
Կորուստներ և դուրս գրումներ	0	0.00%	0	0.00%
Պարտքի հիմնական գումարի և վարկերի ու փոխառությունների տոկոսների մարում	60 000	14.84%	60 000	14.49%
Բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում, մուծումներ կանոնադրական կապիտալում և փայտտիրական մուծումներ	0	0.00%	0	0.00%
Այլ գործառնական և ոչ գործառնական ծախսեր	261	0.06%	261	0.06%
<i>Ընդամենը ելքեր</i>	<i>404 447</i>	<i>100.00%</i>	<i>413 981</i>	<i>100.00%</i>